ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 5-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) 11.02.2012թ. կանոնադրության 17.3 կետի 5-րդ ենթակետի պահանջներով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել հետևյալ սահմանափակումները՝

1.1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) աշխատակազմին ***արգելվում է*** սոցիալական ցանցերում Պալատի, Պալատի նախագահի, Պալատի մարմինների կամ փաստաբանների վերաբերյալ փաստաբանների կողմից ներկայացված քննադատություններին քննադատություններով արձագանքելը: Նշված աշխատակիցները պարտավոր են իրենց տեսակետները կամ ի պաշտոնե պարզաբանումները ներկայացնել (որքանով, որ պարզաբանումները անհրաժեշտ կամ հնարավոր է ներկայացնել սոցիալական ցանցի քննարկման շրջանակում) զսպվածության պայմաններում:

1.2. Պալատի մամուլի խոսնակը կարող է սոցիալական ցանցերում տեղադրել Պալատին կամ փաստաբանությանն առնչվող համապատասխան հոդվածներ, որոնք չպետք է պարունակեն զրպարտչական կամ վիրավորական նյութեր: Պալատի մամուլի խոսնակն իրավասու չէ մասնակցել տեղադրված հոդվածներին վերաբերող քննարկումներին:

2. Սույն հրամանի 1-ին կետի սահմանափակումները չեն տարածվում հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբան աշխատողների վրա: Վերջիններիս հրապարակախոսական վարքագիծը պետք է համապատասխանի Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջներին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել Պալատի աշխատակազմի ղեկավարի վրա, որը նման խախտումներ հայտնաբերելու դեպքում իրավասու է համապատասխան միջոցներ ձեռնարկել:

21 հոկտեմբերի 2015թ.
թիվ 197-Լ

4. Սահմանել, որ սույն կարգն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

21 հոկտեմբերի 2015թ.
թիվ 197-Լ
ք. Երևան